ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 19

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 15.04. 2021թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 13-ը (տասներեքը):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ,
2. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ,
3. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ,
4. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
5. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի օգնական,
6. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն,
7. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
8. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
9. Թ.Խաչատրյան՝գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
10. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
11. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
12. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան,
13. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան,

Ռեկտորատին խորհրդակցական ձայնով մասնակցում էր նաև ՇՊՀ-ի իրավախորհրդատու Վահե Բաղդասարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. «Նախնական զինվորական պատրաստություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման վճարովի համակարգի առաջին կուրսի ուսանող Արման Մկրտչի Գրիգորյանի դիմումի քննարկման մասին

1.1. «Նախնական զինվորական պատրաստություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման վճարովի համակարգի առաջին կուրսի ուսանողներ Սամվել Հարությունի Ազոյանի դիմումի քննարկման մասին

1.2 «Նախնական զինվորական պատրաստություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման վճարովի համակարգի առաջին կուրսի ուսանող Արթուր Ռաֆիկի Մանուկյանի դիմումի քննարկման մասին

2. Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի «Սոցիալական աշխատանք» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման վճարովի համակարգի 3-րդ կուրսի ուսանողուհի Ռիմա Ջիվանի Դավթյանի դիմումի քննարկման մասին

3. Նախորդ տարիներին քննության չմասնակցած ուսանողների 2020-2021 ուստարում քննություն հանձնելու պարագայում՝ սահմանված վճարի չափի մասին

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

1. ԼՍԵՑԻՆ՝

«Նախնական զինվորական պատրաստություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման վճարովի համակարգի առաջին կուրսի ուսանող Արման Մկրտչի Գրիգորյանի դիմումի քննարկման մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ ՆԶՊ-ի առաջին կուրսի ուսանող Արման Մկրտչի Գրիգորյանի քրոջ կողմից ներկայացրած դիմումի համաձայն, եղբայրը կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից հինգ ամիս ժամկետով ստացել է տարկետում՝ բուժման նպատակով և 23.07.2019-ին զորակոչվել է ազգային բանակ:
Տիկին Ավետիսյանը նշեց, որ փաստորեն Արման Մկրտչի Գրիգորյանը այժմ ծառայության մեջ է և նրա ուսանողական իրավունքների վերականգնումը կիրականացվի ծառայությունից հետո՝ նկատի ունենալով 5 ամիս ուշ ծառայության մեկնելը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ե. Սերոբյանը, Գ. Նիկողոսյանը, Ա. Մկրտչյանը:

Արտահայտվողների կարծիքով Արման Մկրտչի Գրիգորյանը զինվորական ծառայությունն ավարտելուց և զորացրվելուց հետո կարող է իր ուսանողական

իրավունքները վերականգնել և ուսումնառությունը շարունակել առաջին կուրսի երկրուրդ կիսամյակից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ներկայացված դիմումը վերցնել, գործը քննարկել Արման Մկրտչի Գրիգորյանի բանակից զորացրվելուց հետո:

1.1 ԼՍԵՑԻՆ՝

1.1. «Նախնական զինվորական պատրաստություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման վճարովի համակարգի առաջին կուրսի ուսանողներ Սամվել Հարությունի Ազոյանի դիմումի քննարկման մասին

1.2 «Նախնական զինվորական պատրաստություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման վճարովի համակարգի առաջին կուրսի ուսանող Արթուր Ռաֆիկի Մանուկյանի դիմումի քննարկման մասին

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ե. Սերոբյանը, Գ. Նիկողոսյանը, Ա. Մկրտչյանը, Բ. Պողոսյանը:

1.1 ՈՐՈՇԵՑԻՆ՝

1.1. Հիմք ընդունելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ ուժը կորցրած ճանաչել ՇՊՀ ռեկտորի 12.02.2021թվականի թիվ 63 հրամանը:

Հիմք ընդունելով «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների հեռացման (ազատման) և վերականգման» կարգի 12-րդ կետը՝ ու Սամվել Հարությունի Ազոյանի դիմումը բավարարել և նրան ուսանողական իրավունքները վերականգնել:

Հանձնարարել ռազմական ամբիոնի պետին «Նախնական զինվորական պատրաստություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման վճարովի համակարգի առաջին կուրսի ուսանող Սամվել Հարությունի Ազոյանի ս/թ. մարտի 10-ից մինչև ապրիլի 12-ը ընկած ժամանակահատվածի համար նախատեսված ուսումնառությունը կազմակերպել անհատական գրաֆիկով՝ ուսումնական գործընթացին զուգահեռ մեկամսյա ժամկետում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.2 ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հիմք ընդունելով 19.03.2021թ. Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից ՀՀ Կառավարության 404-Ն որոշման 23Բ հոդվածը՝ ուժը կորցրած ճանաչել ՇՊՀ ռեկտորի 08.02.2021թվականի թիվ 44 հրամանը:

Հանձնարարել ռազմական ամբիոնի պետին «Նախնական զինվորական պատրաստություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման վճարովի համակարգի առաջին կուրսի ուսանող Արթուր Ռաֆիկի Մանուկյանի ս/թ. փետրվարի 15-ից մինչև մարտիի 19-ը ընկած ժամանակահատվածի համար նախատեսված ուսումնառությունը կազմակերպել անհատական գրաֆիկով՝ ուսումնական գործընթացին զուգահեռ մեկամսյա ժամկետում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի «Սոցիալական աշխատանք» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման վճարովի համակարգի 3-րդ կուրսի ուսանողուհի Ռիմա Ջիվանի Դավթյանի դիմումի քննարկման մասին
Տիկին Ավետիսյանը ներկայացրեց Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հեռակա ուսուցման վճարովի համակարգի 3-րդ կուրսի ուսանողուհի Ռիմա Ջիվանի Դավթյանի դիմումը, որով դիմումատուն ներկայացնում է, որ 2020թ.-ին ինքը հեռացվել է բուհից և խնդրում է վերականգնել իր ուսանողական իրավունքները ՇՊՀ-ի «Սոցիալական գիտությունների և իրավունքի» ֆակուլտետի «Սոցիալական աշխատանք» մասնագիտության ուսուցման համակարգում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ե. Սերոբյանը, Գ. Նիկողոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի «Սոցիալական աշխատանք» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման վճարովի համակարգի 3-րդ կուրսի ուսանողուհի Ռիմա Ջիվանի Դավթյանի դիմումը մերժել՝ ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ-ի 2018թ.-ի դեկտեմբերի 17-ի N 1676-Ն հրամանի 12-րդ կետով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

Նախորդ տարիներին ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը չպաշտպանած, ամփոփիչ ատեստավորման քննությունները չհանձնած կամ անբավարար ստացած շրջանավարտների 2020-2021 ուստարում քննություն վերահանձնելիս վճարի չափի մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Նախորդ տարիների ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը չպաշտպանած, ամփոփիչ ատեստավորման քննությունները չհանձնած կամ անբավարար ստացած շրջանավարտներին 2020-2021 ուստարում ամփոփիչ ատեստավորման քննությունները, ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանությունը թույլատրել վերահանձնելու (հանձնելու) ուսումնական պլանով նախատեսված կրեդիտներին համապատասխան վճար մուծելու պարագայում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

4.1 ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ում վարչական կազմի աշխատակիցների աշխատանքները հեռավար կազմակերպելու փոփոխության մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ շաբաթվա 2 օրերին վարչական կազմի աշխատակիցների աշխատանքի կազմակերպումը բերում է բազմաթիվ բացթողումների:

Պարոն Մելքոնյանի առաջարկությամբ վարչական կազմի աշխատակիցների աշխատանքի կազմակերպումը նախընտրելի է կազմակերպել շաբաթվա 3 օրերին՝

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հիմնադրամի վարչական կազմի աշխատակիցների աշխատանքը կազմակերպել յուրաքանչյուր **երկուշաբթի և չորեքշաբթի և ուրբաթ օրերին** առկա՝ ժամը 10:00-16:00, նույն օրերին հեռավար՝ 9:00-10:00 և 16:00-18:00, իսկ աշխատանքային մյուս օրերը կազմակերպել հեռավար եղանակով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.2 ԼՍԵՑԻՆ՝

Արցախյան երկրորդ պատերազմում ՇՊՀ-ի զոհված ուսանողներին և շրջանավարտներին նվիրված ծառուղու ստեղծման աշխատանքների մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ Արցախյան երկրորդ պատերազմում ՇՊՀ-ի զոհված ուսանողներին և շրջանավարտներին նվիրված ծառուղու ստեղծումը հնարավոր եղավ իրականացնել ATP Բարեգործական հիմնադրամի օգնության շնորհիվ, որի արդյունքում բուհին անվճար հիմունքներով տրամադրվեց 60 հատ «Թույա» տեսակի ծառեր, 40 հատ «Ասպիրակ» և 40 հատ «Կիպրոս» տեսակի թփեր: Պարոն Սերոբյանն առաջարկեց բուհի շնորհակալագրով և Գյումրի քաղաքի սիմվոլով՝ «Կլկլան» բաժակով պարգևատրել ATP Բարեգործական հիմնադրամին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Արցախյան երկրորդ պատերազմում ՇՊՀ-ի զոհված ուսանողներին և շրջանավարտներին նվիրված ծառուղու ստեղծմանը օժանդակելու համար բուհի շնորհակալագրով և Գյումրի քաղաքի սիմվոլով՝ «Կլկլան» բաժակով պարգևատրել ATP Բարեգործական հիմնադրամին:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Պարոն Սերոբյանը նիստի ավարտին անդրադարձավ նաև 2020-2021 ուտարում անփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովների կազմերի ձևավորման հարցերին և ֆակուլտետների դեկաններին տրվեցին հանձնարարականներ:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ն. Ավետիսյան
Ռեկտորի օգնական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետի դեկանի՝ Բ. Պողոսյան

Հումանիտար գիտությունների և
արվեստի ֆակուլտետի դեկան՝ Թ. Մելիքյան

Մանկավարժության ֆակուլտետի
դեկան՝ Ռ. Մարդոյան

Սոցիալական գիտությունների և
իրավունքի ֆակուլտետի դեկան՝ Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ Ա. Մկրտչյան

Անձն.կառ.և իրավ.ապահովման
բաժնի պետ՝ Ա. Հովհաննիսյան